Քաղվածք
Եզրափակիչ մաս

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/7236/02/23

ՎՃԻՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

20 ապրիլի 2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ՝ դատավոր Արամ Մկրտչյանի, առանց դատական նիստ հրավիրելու քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի /այսուհետև՝ հայցադիմում/ «ՄՄՍ գրուպ» ՍՊ ընկերության /այսուհետև՝ նաև Հայցվոր, պետական գրանցման համար 29.110.996590, ՀՎՀՀ 05546049, Շիրակի մարզ, Ախուրյան, Հոլանդական թաղ., տնակ 1/ ընդդեմ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմադրամի /այսուհետև՝ նաև Պատասխանողի, պետական գրանցման համար 222.160.840381, ՀՎՀՀ 01504054, ք.Երևան, Տերյան 105/՝ գնահատող հանձնաժողովի 05.01.2023 թվականի № 2 արձանագրային որոշումը՝ հայտը շտկելու մասով, ոչ իրավաչափ ճանաչելու և անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ գնահատող հանձնաժողովի 16.01.2023 թվականի № 3 արձանագրային որոշումը՝ հայտը մերժելու մասով անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՎՃՌԵՑ

1. «ՄՄՍ գրուպ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմադրամի՝ գնահատող հանձնաժողովի 05.01.2023 թվականի № 2 արձանագրային որոշումը՝ հայտը շտկելու մասով, ոչ իրավաչափ ճանաչելու և անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ գնահատող հանձնաժողովի 16.01.2023 թվականի № 3 արձանագրային որոշումը՝ հայտը մերժելու մասով անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված :

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Digitally signed by MKRTCHYAN ARAM 1712720074
Date: 2023.04.20 13:49:21 AMT